ԲԱՑ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության երկրորդ գործողությունների ծրագրի (2014-2016թթ.) ինքնագնահատման ամփոփ զեկույց

Սեպտեմբեր, 2016թ.

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Ներածություն **3**

Ազգային գործողությունների ծրագրի գործընթաց..... **3**

ԲԿԳ-Հայաստան երկրորդ գործողությունների ծրագրի մշակման գործընթաց.....3

ԲԿԳ-Հայաստան երկրորդ գործողությունների ծրագրի իրականցման ընթացքում հանրային քննարկումներ.....5

Ինքնագնահատման զեկույցի շուրջ հանրային քննարկումներ և առաջարկություններ **8**

Անկախ հաշվետվական մեխանիզմի հետազոտողի առաջարկություններ **8**

ԲԿԳ-Հայաստան երկրորդ գործողությունների ծրագրում ամրագրված պարտավորությունների իրականացման մասին տեղեկատվություն..... **9**

Եզրակացություն **25**

Ներածություն

Ժամանակակից աշխարհում հասարակությունը կառավարությունից պահանջում է լինել բաց, հաշվետու և արդյունավետ՝ ակնկալելով առավել ակտիվ քաղաքացիական մասնակցություն հանրային կառավարման գործընթացներում:

2011 թվականին սկիզբ դրվեց «Բաց կառավարման գործընկերություն» (այսուհետ՝ ԲԿԳ) նախաձեռնությանը՝ որպես կառավարության բաց, արդյունավետ և հաշվետու գործելու, ինչպես նաև հանրային կառավարման ոլորտում ակտիվ քաղաքացիական մասնակցությունը խթանելու մեխանիզմներից մեկը: Ակներև է, որ մեր երկիրն չէր կարող անմասն մնալ ԲԿԳ գործընթացից: Հայաստանի Հանրապետության միանալը Բաց կառավարման գործընկերության (այսուհետ՝ ԲԿԳ) շարժմանն ազդարարվել էր ՀՀ արտաքին գործերի նախարարի նամակով[1]՝ ողղված ԲԿԳ համակարգող խորհրդի համանախագահներին:

ԲԿԳ գործընթացը գտնվում է երկրի ՀՀ Նախագահի ուշադրության ներքո: 2015թ. ապրիլին «Արարատի ստորոտին» 5-րդ մեդիա համաժողովի ընթացքում ՀՀ Նախագահն իր ելույթում կարևորել է Հայաստանի ակտիվ մասնակցությունը ԲԿԳ նախաձեռնության գործընթացներում:

2014 թվականին ընդունվեց ԲԿԳ-Հայաստան երկրորդ գործողությունների ծրագիրը (այսուհետ՝ երկրորդ ԳԾ), և նախաձեռնությունը թևակոխեց նոր փուլ:

ՀՀ կառավարությունը, իր երկրորդ ԳԾ-ն մշակելիս, **առաջնորդվել է ԲԿԳ հիմնական մարտահրավերների**, այն է՝ հանրային ծառայությունների բարելավում, հանրային միջոցների արդյունավետ կառավարում և հանրային օրինավորության խթանում, հաղթահարմանն ուղղված պարտավորությունների ներգրավման սկզբունքով:

Գաղտնիք չէ, որ վերոնշյալ մարտահրավերներին առավել արդյունավետ արձագանքելու համար պարտադիր հրամայական է **ԲԿԳ 4 սզբունքներն որպես ուղենիշ վերցնելը**: Այս տրամաբանությամբ, դեռևս ծրագրի մշակման փուլում խիստ ուշադրություն է դարձվել յուրաքանչյուր պարտավորության թիրախային լինելու և ԲԿԳ 4 սկզբունքներից առնվազն մեկին համապատասխանելու պահանջի վրա:

Ազգային գործողությունների ծրագրի գործընթաց

ԲԿԳ-Հայաստան երկրորդ գործողությունների ծրագրի մշակման գործընթաց

ՀՀ կառավարությունը, քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների հետ համատեղ, հիմք ընդունելով անկախ հաշվետվական մեխանիզմի (այսուհետ՝ ԱՀՄ) առաջարկությունները և հաշվի առնելով ԲԿԳ-Հայաստան առաջին գործողությունների

[1] http://www.opengovpartnership.org/country/armenia

ծրագրի մշակման և իրականացման արդյունքում ձեռք բերված աննախադեպ փորձը, 2013 թվականի աշնանը նախաձեռնեց երկրորդ ԳԾ-ի մշակման գործընթացը:

Երկրորդ ԳԾ-ն կազմվել է ինչպես կառավարության, այնպես էլ քաղաքացիական հասարակության կողմից ներկայացրած առաջարկությունների հիման վրա՝ ներառելով այնպիսի ոլորտներ, ինչպիսիք են հանքարդյունաբերությունը, առողջապահությունը, կրթությունը, տեղական ինքնակառավարումը, տեղեկատվության ազատությունը և այլն: Ծրագրում տեղ գտած 11 պարտավորություններից 8-ը ընդգրկվել են քաղաքացիական հասարակության առաջարկություններից, մնացած 3-ը՝ ՀՀ կառավարության:

Ծրագիրը կազմելու և դրանից բխող աշխատանքները համակարգելու համար ձևավորվել էր նոր աշխատանքային խումբ (ՀՀ վարչապետի համապատասխան որոշմամբ), որում այս անգամ ներգրավված էին 8 հասարակական կազմակերպությունների (այսուհետ՝ ՀԿ) ներկայացուցիրներ, **այսինքն՝ բոլոր այն ՀԿ-ները**, որոնք հետաքրքրվածություն ենցուցաբերել և դիմել աշխատանքային խմբի անդամ լինելու խնդրանքով:

Ծրագրի նախագիծը մշակվել է պետական մարմինների կողմից ներկայացրած առաջարկությունների հիման վրա: Այնուհետև, հանրային իրազեկման և քաղաքացիական հասարակության առաջարկությունները ստանալու նպատակով, այն տեղադրվել է www.ogp.am կաքում: Նախագիծը, ինչպես նաև առաջարկություններ ներկայացնելու վերաբերյալ հայտարարությունը գործընթացում ակտիվ ներգրավված ՀԿ-ների կողմից ևս շրջանառվել են այլ գործընկեր ՀԿ-ների և քաղաքացիների միջև: Զուգահեռաբար նախագիծը մի քանի անգամ քննարկվել է աշխատանաքային խմբի նիստերի ժամանակ *(մասնավորապես՝ 2013թ. սեպտեմբերի 9-ին, 2013թ. նոյեմբերի 26-ին կայացած նիստերի ժամանակ)*: Հանրային քննարկումները շարունակելու նպատակով ՀՀ կառավարությունը «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպության հետ համատեղ և ԱՄՆ միջազգային զարգացման գործակալության ու ՄԱԿ-ի զարգացման ծրագրի ֆինանսական աջակցությամբ 2014թ. ապրիլի 5-6-ը Աղվերանում կազմակերպել է «ԲԿԳ-Հայաստան. թափանցիկություն և հաշվետվողականություն. համագործակցություն կառավարության և քաղաքացիական հասարակության միջև» աշխատանքային քննարկումը:

Միաժամանակ, ծրագրում նոր առաջարկություններ ընդգրկելու և հանրային իրազեկում ապահովելու նպատակով, Գյումրու ժուրնալիստների «Ասպարեզ» ակումբի գլխավորությամբ կազմակերպվել են իրազեկման արշավ և մի շարք հանդիպումներ, որոնց արդյունքում մի շարք հասարակական կազմակերպությունների տրամադրած առաջարկություններ ևս ներկայացվել են ՀՀ կառավարություն: Վերոնշյալ առաջարկությունները քննարկելու և լրացուցիչ պարզաբանումներ ստանալու նպատակով **2014 թվականի հունիսի 5-ին** ՀՀ կառավարության աշխատակազմում կազմակերպվել է քաղաքացիական հասարակության և պետական մարմինների ներկայացուցիչների մասնակցությամբ աշխատանքային հանդիպում: Ծրագրի նախագծի վերջնական տարբերակը քննարկվել է 2014 թվականի հուլիսի 15-ին կայացած ՀՀ վարչապետի 2014թ. հուլիսի 15-ի N656-Ա որոշմամբ ստեղծված աշխատանքային խմբի նիստի ժամանակ: Նախագծի վերաբերյալ վերջնական հանրային քննարկումը տեղի է ունեցել 2014 թվականի հուլիսի 18-ին Երևանում ՀՀ կառավարության և «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպության հետ համատեղ, ինչպես նաև ԵԱՀԿ երևանյան գրասենյակի ֆինանսական աջակցությամբ

կազմակերպված միջոցառման շրջանակներում: Աշխատաժողովին վերոնշյալ աշխատանքային խմբի անդամներից բացի մասնակցել են նաև քաղաքացիական հասարակության և մի շարք միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչներ:

Ընդհանուր առմամբ ներկայացվել էր շուրջ 50 առաջարկություն, որոնցից ընտրվեցին 11-ը, որոնք համապատասխանում էին ԲԿԳ սկզբունքներին և ձևաչափին:

Ծրագրում չներառված առաջարկությունների վերաբերյալ կազմվել էր ամփոփաթերթ, որտեղ ՀՀ կառավարությունը ներկայացրել էր դրանք ծրագրում չընդգրկելու հիմնավորում և պարզաբանում: Այդ ամփոփաթերթը նույնպես նախապես տրամադրվել էր աշխատանքային խմբի անդամներին և տեղադրվել www.ogp.am կայքում,

ՀՀ կառավարությունը պատրաստակամություն էր հայտնել նաև քաղաքացիական հասարակության հետ քննարկել Ծրագրում չընդգրկված առաջարկությունների իրականացման հնարավոր մեխանիզմները ԲԿԳ նախաձեռնությունից դուրս, սակայն մինչ օրս, մեկ տարվա ընթացքում, քաղաքացիական հասարակության կողմից հետաքրքրվածություն չի նկատվել և չի ստացվել որևէ առաջարկություն՝ բացառությամբ Ինֆորմացիայի ազատության կենտրոն ՀԿ-ի:

Հարկ է նշել, որ երկրորդ ԳԾ-ի վերջնական ամփոփումը և ՀՀ կառավարության կողմից դրա հաստատումը համընկան ՀՀ վարչապետի գլխավորությամբ ՀՀ կառավարության հրաժարականի և նոր կառավարության ձևավորման հետ: Ուստի, *վերոնշյալ հանգամանքով է պայմանավորված ծրագրի՝ սահմանված ժամանակացույցից փոքր-ինչ շեղումով* ՀՀ կառավարության որոշմամբ հաստատելու և ներկայացնելու փաստը:

ԲԿԳ-Հայաստան երկրորդ գործողությունների ծրագրի իրականցման ընթացքում հանրային քննարկումներ

Երկրորդ ԳԾ-ն հաստատվեց ՀՀ կառավարության 2014թ. հուլիսի 31-ի թիվ 32 արձանագրային որոշմամբ: Որոշ պարտավորությունների իրականացումը մեկնարկեց 2014 թվականի սեպտեմբերին: Ծրագրի մեկնարկից անցել է շուրջ 2 տարի, որի ընթացքում բազմաթիվ հանդիպումներ և քննարկումներ են տեղի ունեցել ինչպես կառավարության, այնպես էլ ՀԿ-ների նախաձեռնությամբ:

Քննարկման առարկա են դարձել ինչպես առանձին պարտավորություններ, դրանց կատարման ընթացքը, այնպես էլ այլ՝ ԲԿԳ գործընթացին առնչվող հարցեր:

Մասնավորապես՝ ծրագրի **4-րդ պարտավորությունը** («ՀՀ կառավարության 2011թ. դեկտեմբերի 15-ի N 1835-Ն որոշման մեջ լրացումներ ու փոփոխությունների կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը) հանրային քննարկումներ իրականացնելու և քաղաքացիական հասարակության կարծիքներ ստանալու նպատակով տեղադրվել է www.ogp.am կայքում և ներկայացվել աշխատանքային խմբի ՀԿ-ներին՝ առաջարկելով այն շրջանառել այլ ՀԿ-ների շրջանակում:

Մեկ այլ օրինակ՝ ՀՀ արդարադատության նախարարությունը մի քանի ամիս է ակտիվ հանրային քննարկումներ է իրականացնում **ծրագրի 7-րդ պարտավորության** (Պետական քաղաքականությունների և օրենսդրական բարեփոխումների՝ բաց, թափանցիկ, մասնակցային և հաշվետու գործընթացի ապահովում) շուրջ:

Շահագրգռող ՀԿ-ներն իրենց հերթին ակտիվ մասնակցություն են ունենում ԲԿԳ գործընթացում:

Այսպես օրինակ՝ «Լրագրողներ հանուն ապագայի» ՀԿ-ի կողմից՝ ԱՄՆ դեսպանատան աջակցությամբ ԲԿԳ խորագրով ծրագրի շրջանակներում իրականացվել են դասընթաց-քննարկումները, որին իր գործուն աջարցությունն է ցուցաբերալ ՀՀ կառավարությունը:

2015 թվականի մարտի 3-ին «Կոնգրես» հյուրանոցի «Պիկասո» սրահում տեղի ունեցել ԲԿԳ աշխատանքային խմբի ընդլայնված նիստը: Նիստին մասնակցում էին ոչ միայն ԲԿԳ աշխատանքային խմբի անդամները, այլև տեղական և միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչներ: Նիստի ընթացքում ներկայացվեց երկրորդ ԳԾ-ի պարտավորությունների իրականացման ընթացքը, քննարկվեցին քաղաքացիական հասարակության կողմից ծրագրի մոնիտորինգին առնչվող և այլ հարցեր:

2015 թվականի ապրիլի 15-ին ՀՀ կառավարությունում տեղի ունեցավ ԲԿԳ նախաձեռնության աշխատանքները համակարգող աշխատանքային խմբի նիստը: Նիստի ընթացքում քննարկվեցին «Հանրային ծառայությունների բարելավումը Բաց կառավարման սկզբունքների գործածմամբ» թեմայով Բաց կառավարման միջազգային մրցանակաբաշխությանը (OGP AWARD) ներկայացվելիք հայտի առաջարկները: Նիստին մասնակցում էին ինչպես կառավարության, այնպես էլ՝ քաղաքացիական հասարակության և միջազգային կազմակերպության ներկայացուցիչները:

2015 թվականի հունիս 29-ին Կոնգրես հյուրանոցում տեղի ունեցավ Ինֆորմացիայի ազատության կենտրոնի կողմից՝ ԵԱԽԿ Երևանի գրասենյակի աջակցությամբ կազմակերպված «ԲԿԳ, մոնիտորինգի գործիքներ» աշխատանքային քննարկումը, : Քննարկվեցին ԲԿԳ գործընթացների և ԳԾ-ի գնահատման մեթոդաբանությունը, փուլերը, ծրագրի արդյունավետ մոնիտորինգի իրականացմանը առնչվող հարցեր: Նիստին մասնակցում էին ՀՀ կառավարության աշխատակազմի, ՀԿ-ների և միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչներ:

Հոկտեմբերի 5-ին տեղի ունեցավ «Բաց կառավարման գործընկերություն» նախաձեռնության Հայաստանյան աշխատանքները համակարգող աշխատանքային խմբի հերթական նիստը, որին հրավիրվել էին, նաև միջազգային կազմակերպությունների գործընկեր ներկայացուցիչները: Հանդիպման ընթացքում ԲԿԳ աշխատանքային խմբի անդամները ներկայացրեցին երկրորդ ԳԾ-ի իրականացման ընթացքը՝ ըստ 11 հանձնառությունների: Նիստի ընթացքում ԲԿԳ յուրաքանչյուր հանձնառության պատասխանատու գերատեսչության ներկայացուցիչ ներկայացրեց իրենց մասով կատարված աշխատանքների արդյունքները և գործընթացների հետ կապված խնդիրները:

2016 թվականի փետրվարի 15-ին տեղի ունեցավ «Բաց կառավարման գործընկերություն» նախաձեռնության հայաստանյան աշխատանքները համակարգող աշխատանքային խմբի ընդլայնված նիստը: Ավանդույթի համաձայն նիստին ներկա էին նաև միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչներ: Հանդիպման ընթացքում քննարկվեցին մի շարք հարցեր, այդ թվում նաև.

- Մեխիկո քաղաքում 2015 թվականի հոկտեմբերին անցկացված ԲԿԳ գլոբալ համաժողովը և ԲԿԳ միջազգային մրցանակաբաշխությունը,
- ԲԿԳ Հայաստանյան 2-րդ Գործողությունների ծրագրի իրականացման ընթացքը,

- 2016-2018թթ. համար 3-րդ Գործողությունների ծրագրի նախագծումը:

2016թվականի ապրիլի 4-ին տեղի ունեցավ հանրային քննարկում ««Բաց կառավարման գործընկերության» անկախ հաշվետվական մեխանիզմի առաջընթացի վերաբերյալ հայաստանյան հաշվետվությունը» թեմայով: Քննարկմանը մասնակցում էին ԲԿԳ անկախ հաշվետվական մեխանիզմի ազգային անկախ հետազոտող Արտակ Քյուրումյանը, ՀՀ կառավարության աշխատակազմի հանրային կառավարման հարցերով խորհրդատու, ԲԿԳ աշխատանքային խմբի անդամ Արամ Ասատրյանը, Թրանսփարենսի ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոնի գործադիր տնօրեն Վարուժան Հոկտանյանը, «Ինֆորմացիայի ազատության կենտրոնի» նախագահ Լիանա Դոյդոյանը, Ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբի խորհրդի նախագահ Լևոն Բարսեղյանը և մի շարք այլ ՀԿ-ներ:

Հանրային իրազեկման նոր փուլ

2016 թվականի ապրիլին Կառավարությունը ԲԿԳ հայաստանյան գործընթացի պատմության մեջ առաջին անգամ ձեռնարկեց նաև մարզային հանդիպումներ՝ նպատակ ունենալով ներգրավել մարզային և մասնագիտացված հասարակական կազմակերպություններին, ինչպես նաև բարձրացնել ԲԿԳ նախաձեռնության և Գործողությունների 3-րդ ծրագրի մշակման մասին իրազեկվածության մակարդակը նաև մայրաքաղաքի շրջանակներից դուրս: Իրազեկման արշավը մեկնարկեց Երևանում ՄԱԿ-ի գրասենյակում կայացած հանդիպումով, իսկ մնացած հանդիպումներն անցկացվեցին ըստ նախօրոք հրապարակված ժամանակացույցի՝ Գյումրիում, Վանաձորում, Դիլիջանում, Արմավիրում և Գորիսում:[2] Բացի աշխատանքային խմբի անդամներից, հանդիպումներին մասնակցում էին նաև քաղաքացիական հասարակության և միջազգային գործընկեր կազմակերպությունների ներկայացուցիչները:

ԲԿԳ-Հայաստան երկրորդ գործողությունների ծրագրի վերաբերյալ ԱՀՄ հետազոտողի զեկույցի առաջարկությունների հիման վրա ՀՀ կառավարությունը զգալի շտկումներ իրականացրեց հանրային իրազեկման գործընթացում: Այսպես, օրինակ, գործընթացում ներգրավվեցին թվով ավելի շատ ՀԿ-ներ ու առաջին անգամ, անհատ քաղաքացիներ, իրականացվեցին մի շարք իրազեկման մարզային արշավներ և հանդիպումներ, կազմակերպվեցին բազմաթիվ շահագրգիռ քննարկումներ, ներգրավվեցին նաև տարբեր ոլորտների փորձագետներ և մասնավոր հատվածի ներկայացուցիչներ: Գործընթացի վերաբերյալ հանրային իրազեկման մակարդակի բարձրացման նպատակով նախաձեռնվեց հեռուստահաղորդումների շարք, որտեղ ներկայացվում է ԲԿԳ գործընթացը, ինչպես նաև երկրորդ ԳԾ-ի հանձնառությունները և դրանց իրականացման ընթացքը: Հեռուստահաղորդումները եթեր են հեռարձակվում յուրաքանչյուր կիրակի, «Երկիր Մեդիա» հեռուստաալիքով: Թվարկված նյութերը տեղադրվել և հասանելի են նաև www.ogp.am կայքում:

2016 թվականի օգոստոսի 5-6-ը Ծաղկաձոր քաղաքի Ռոսիա համալիրում տեղի ունեցավ ԲԿԳ աշխատանքային խմբի ընդլայնված նիստ, որին հրավիրվել էին նաև միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչներ, ինչպես նաև գործընկեր այլ ՀԿ-ներ: Նիստի

[2] http://ogp.am/hy/news/item/2016/04/22/regions/

նպատակն էր ԲԿԳ երկրորդ ԳԾ-ի հանձնառությունների և իրականացման ընթացքի ամփոփումը: Միջոցառումը կազմակերպվել էր ԻԱԿ-ի և ՀՀ կառավարության աշխատակազմի հետ համատեղ՝ ԱՄՆ դեսպանության աջակցությամբ:

Ինքնագնահատման զեկույցի շուրջ հանրային քննարկումներ և առաջարկություններ

ՀՀ կառավարության աշխատակազմը, ԲԿԳ-Հայաստան երկրորդ ԳԾ-ի վերաբերյալ ինքնագնահատման զեկույցի նախագիծի հանրային քննարկումներն ապահովելու և առաջարկություններ ստանալու նպատակով, 2015 թվականի սեպտեմբերի 15-ին տեղադրել է այն www.gov.am կայքում և միաժամանակ էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացրել աշխատանքային խմբի անդամներին՝ ուսումնասիրելու և այլ շահագրգիռ ՀԿ-ների և անհատների միջև շրջանառելու խնդրանքով: Առաջարկություններ և հանրային քննարկումներ իրականացնելու համար վերջնաժամկետ է սահմանվել ս.թ. սեպտեմբերի 28-ը՝ հատկացնելով 2 շաբաթ ժամանակահատված (համաձայն մեթոդական ցուցումների):

Նշված ժամկետում նախագծի վերաբերյալ անհատական քննարկումներ են եղել մի շարք պետական մարմինների հետ: ԲԿԳ աշխատանքները համակարգող աշխատանքային խմբի անդամներից առաջարկություններ ներկայացրել էր միայն «Արազա» ԲՀԿ-ն: Էլեկտրոնային փոստով ստացված «Արազա» ԲՀԿ-ի առաջարկությունները քննարկվել են և ամբողջությամբ ներառվել Ինքնագնահատման զեկույցում:

Անկախ հաշվետվական մեխանիզմի հետազոտողի առաջարկություններ

ԲԿԳ-Հայաստան առաջին գործողությունների ծրագրի վերաբերյալ անկախ հաշվետվական մեխանիզմի հետազոտողի զեկույցի առաջարկությունների հիման վրա ՀՀ կառավարությունը զգալի շտկումներ իրականացրեց երկրորդ ԳԾ-ի մշակման և իրականացման գործընթացում:

Առաջարկվել էր՝

- *գործողությունների ծրագրի մշակման աշխատանքներում ներգրավել ավելի մեծ թվով մասնագիտացված և մարզային ՀԿ-ներ,*
- *հրապարակել հանրային քննարկումների արդյունքների հակիրճ ամփոփագիրը,*
- *հրապարակել ստացված բոլոր առաջարկները և կազմակերպել լայն հանրային քննարկումներ,*
- *ընտրել պարտավորություններ, որոնք համապատասխանում են ԲԿԳ սկզբունքներին և արժեքներին:*

Այսպես, երկրորդ ԳԾ-ի մշակման գործընթացում ներգրավվել էին թվով ավելի շատ ՀԿ-ներ, որոնք էլ իրենց հերթին՝ հանդիսանալով աշխատանքային խմբի անդամ, շահագրգիռ քննարկումներ և հանդիպումներ են ունեցել այլ մասնագիտացված և մարզային գործընկեր

ՀԿ-ների հետ, հավաքագրել բազմաթիվ առաջարկներ և ներկայացրել ՀՀ կառավարություն: Բացի այդ, երկրորդ ԳԾ-ի հանրային քննարկումների համար հատկացված ժամանակահատվածն ավել է եղել քան առաջին ԳԾ-ի համար նախատեսվածը, որի ընթացքում բազմաթիվ հանդիպումներ են կազմակերպվել ինչպես քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների, այնպես էլ պետական մարմինների ներկայացուցիչների հետ, որոնց ընթացքում քննարկվել են ներկայացված բոլոր առաջարկները: Առանձին առաջարկներ նաև անձամբ քննարկվել են դրանց հեղինակների կամ հեղինակի ներկայացուցչի հետ:

Հանդիպումների/քննարկումների արդյունքները հակիրճ ամփոփագրերի տեսքով հրապարակվել են www.ogp.am կայքում և հասանելի են եղել բոլորի համար: Նույն կայքում հրապարակվել են նաև բոլոր ստացված՝ ԳԾ-ում ընդգրկված, ինչպես նաև չընգրկված առաջարկությունները, դրանց վերաբերյալ ՀՀ կառավարության մեկնաբանությունները:

Հիմնվելով արդեն իսկ կուտակած փորձի վրա, օգտվելով ԲԿԳ օժանդակող գրասենյակի տրամադրված և www.opengovpartnership.org կայքում տեղադրված նյութերից և օրինակելի ձևաչափերից, հաշվի առնելով ԱՀՄ-ի առաջարկությունները՝ մշակվեց ԲԿԳ-Հայաստան երկրորդ ԳԾ-ն, որը համապատասխանում է ԲԿԳ ձևաչափին, սկզբունքներին և ուղղված է հաղթահարելու ԲԿԳ մարտահրավերները:

ԲԿԳ-Հայաստան երկրորդ գործողությունների ծրագրում ամրագրված պարտավորությունների իրականացման մասին տեղեկատվություն

Ստանձնած 11 պարտավորություններից 7 ավարտված են, իսկ 4 բավականին կատարված: Ստորև մանրամասը.

1. «Հանրապետական երկրաբանական ֆոնդ» ՊՈԱԿ-ում առկա տվյալների թվայնացում և հրապարակում		
Պարտավորությունը իրականացնող մարմին		ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարություն
Պարտավորությունը իրականացնող մարմնի պատասխանատու անձ		Շուշանիկ Քերոբյան
Պաշտոն,վարչություն/բաժին		Ընդերքի վարչության օգտակար հանածոների և ընդհանուր երկրաբանության բաժնի պետ
Էլ. հասցե		sh.kerobyan@gmail.com
Հեռախոս		+37411 32 32 73
Այլ շահագրգիռ մասնակից մարմիններ	**Կառավարություն**	
	Հասարակական կազմակերպություն ներ,մասնավոր	ԱՄՆ միջազգային զարգացման գործակալություն USAID (համաձայնությամբ)

	հատված,աշխատանքային խմբեր, բազմակողմ այլ կազմակերպություններ	
Հիմնական նպատակ		Նախատեսվում է ամբողջությամբ թվայնացնել ֆոնդում առկա տեղեկատվական բազան (օգտակար հանածոների մոտ 750 հանքավայրերի և 600 հանքերևակումների վերաբերյալ կազմված շուրջ 12,000 երկրաբանական հաշվետվություններ և 8,000 միավոր քարտեզագրական և գծագրական փաթեթներ)՝ միաժամանակ ապահովելով նոր ստացվող նյութերի (քարտեզներ, ֆինանսական և ոչ ֆինանսական հաշվետվություններ, այլ փաստաթղթեր) թվայնացումը:
Պարտավորության համառոտ նկարագրություն (140 պ'.ն.)		Հայաստանի Հանրապետությունում հանքարդյունաբերության էլեկտրոնային շտեմարանի ներդրում:
Համապատասխանությունը		Տեղեկատվության հասանելիություն, հանրային հաշվետվողականություն, տեխնոլոգիաներ և ինովացիա ուղղված թափանցիկության և հաշվետվողականության ապահովմանը
Հավակնոտությունը		Բարելավվելու է հանքարդյունաբերության վերաբերյալ տեղեկատվության դյուրին հասանելիությունը հանրությանը: Կհրապարակվի օգտակար հանածոների արդյունահանման նպատակով տրամադրված ընդերքօգտագործման իրավունքների մասին, օգտակար հանածոների արդյունահանման նպատակով երկրաբանական ուսումնասիրության տրամադրված ընդերքօգտագործման իրավունքների, ստորերկրյա հանքային ջրերի արդյունահանման նպատակով տրամադրված ընդերքօգտագործման իրավունքների մասին տեղեկատվություն, ինչպես նաև մետաղային օգտակար հանածոների քարտեզը:
Կատարման կարգավիճակը	Չմեկնարկված	Սահմանափակ կատարված	Բավականին կատարված	Ավարտված
			V	
Արդյունքների նկարագիրը		Թվայնացման աշխատանքների համար մրցութային կարգով ձեռք են բերվել անհրաժեշտ սարքավորումներ և ընտրվել է կազմակերպություն թվայնացման և կայքի նախագծման աշխատանքներն իրականացնելու համար: Թվայնացման աշխատանքները գտնվում են իրականացման փուլում: Մինչ այժմ թվայնացվել է շուրջ 350000 էջ նյութ և 2500 ք/մ քարտեզ: www.geofund.am կայքը կգործարկվի հոկտեմբերի 1-ին: Մինչև հանձնառության ժամկետի ավարտը կիրականացվի նախատեսված աշխատանքների 50-60%:
Վերջնաժամկետը		2016թ. դեկտեմբեր
Հաջորդ քայլերը		Աշխատանքների բնականոն ընթացքի ապահովում:
Հավելյալ տեղեկություն		
Սույն պարտավորության իրականացման ուշացումը պայմանավորված է ֆինանսական միջոցների ներգրավման հետ կապված պայմանագրի և պայմանների բանակցություններով, ինչպես նաև անհրաժեշտ սարքավորումների մատակարարման և տեղադրման ժամկետներով:		

2. Հանքարդյունաբերության թափանցիկության ապահովում		
Պարտավորությունը իրականացնող մարմին		ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարություն
Պարտավորությունը իրականացնող մարմնի պատասխանատու անձ		Շուշանիկ Քերոբյան
Պաշտոն,վարչություն/բաժին		Ընդերքի վարչության օգտակար հանածոների և ընդհանուր երկրաբանության բաժնի պետ
Էլ. հասցե		sh.kerobyan@gmail.com
Հեռախոս		+37411 32 32 73
Այլ շահագրգիռ մասնակից մարմիններ	**Կառավարություն**	ՀՀ արտաքին գործերի նախարարություն, ՀՀ արդարադատության նախարարություն, ՀՀ էկոնոմիկայի նախարարություն, ՀՀ ֆինանսների նախարարություն
	Հասարակական կազմակերպություններ,մասնավոր հատված,աշխատանքային խմբեր, բազմակողմ այլ կազմակերպություններ	
Հիմնական նպատակ		Նախաձեռնությանը միանալը կբարձրացնի ոլորտի թափանցիկությունը, կնպաստի հաշվետվողականության բարձր մակարդակի ապահովմանը, ինչպես նաև ներդրումային միջավայր բարելավմանը:
Պարտավորության համառոտ նկարագրություն (140 պ'.ն.)		Արդյունահանող արդյունաբերության թափանցիկության նախաձեռնությանը (EITI) անդամակցելու գործընթացի մեկնարկ, մասնավորապես՝ քննարկումների, բանակցությունների անցկացում և նախապատրաստական այլ անհրաժեշտ աշխատանքների իրականացում:
Համապատասխանությունը		Տեղեկատվության հասանելիություն, հանրային հաշվետվողականություն, հանրային մասնակցություն
Հավակնոտությունը		Հաշվետվողականության բարձր մակարդակի ապահովում, ինչպես նաև ներդրումային միջավայրի բարելավում:
Կատարման կարգավիճակը	Չմեկնարկված	Սահմանափակ կատարված	Բավականին կատարված	Ավարտված
				V
Արդյունքների նկարագիրը		2015թ. հուլիսի 28-ին ՀՀ կառավարությունում տեղի ունեցած Կոռուպցիայի դեմ պայքարի խորհրդի առաջին նիստի ընթացքում ազդարարվել է ՀՀ կառավարության պատրաստակամությունը՝ անդամակցելու Արդյունահանող ճյուղերի թափանցիկության նախաձեռնությանը (EITI) և այդ գործընթացների համակարգումը հանձնարարվել է ՀՀ կառավարության աշխատակազմի ղեկավար-նախարար Դավիթ Հարությունյանին: Ձևավորվել է բազմաշահառու (multistakeholder group), նախապատրաստվել է այդ խմբի անհատական կազմը հաստատող ՀՀ վարչապետի որոշման նախագիծը: 2016 թվականի հունիսի 27-ի ՀՀ կառավարությունում տեղի ունեցավ ՀՀ ԱՃԹՆ-ի բազմաշահառու խմբի անդրանիկ նիստը, որի ընթացքում որոշվեց ԲՇԽ-ի առաջիկա աշխատանքների և Հայաստանի ԱՃԹՆ-ին անդամակցության հայտի ներկայացման ժամանակացույցը: Բազմաշահառու խումբը սկսել է իր			

	աշխատանքները, նախապատրաստվում է խմբի աշխատակարգը: www.gov.am կայքում բացվել է համապատասխան բաժին, որտեղ տեղադրված է նախաձեռնության մասին ամբողջական տեղեկատվությունը:
Վերջնաժամկետը	2016թ. դեկտեմբեր
Հաջորդ քայլերը	Խմբի անհատական կազմի հաստատող ՀՀ վարչապետի որոշման ստորագրում, խմբի աշխատակարգի հաստատում, գործողությունների ծրագրի նախագծում:

3. Առողջապահության ֆինանսավորման տեղեկատվության հանրային մատչելիության ապահովում		
Պարտավորությունը իրականացնող մարմին		ՀՀ առողջապահության նախարարություն
Պարտավորությունը իրականացնող մարմնի պատասխանատու անձ		Արմինե Շահվերդյան
Պաշտոն,վարչություն/բաժին		ՀՀ առողջապահության նախարարության աշխատակազմի պետական առողջապահական գործակալության բժշկական ծառայությունների գնման և տեղեկատվական բաժնի պետ
Էլ. հասցե		shah.armine@gmail.com
Հեռախոս		+37410 65-47-11
Այլ շահագրգիռ մասնակից մարմիններ	**Կառավարություն**	
	Հասարակական կազմակերպություններ,մասնավոր հատված,աշխատանքային խմբեր, բազմակողմ այլ կազմակերպություններ	
Հիմնական նպատակ		Ստեղծել առողջապահության համակարգի ֆինանսական պորտալ, որտեղ բնակչությունը, մասնագետները և հանրությունը կարող են ստանալ տեղեկատվություն պետության կողմից երաշխավորված ծրագրերի ֆինանսավորման, հիմնական ծառայությունների փաթեթի վերաբերյալ, երբ պետք է պացիենտը վճարի մատուցված ծառայության դիմաց, իսկ երբ՝ ոչ, ինչպես նրանք կարող են ստանալ ռեցեպտներ, որոնք կարող են պետության կողմից երաշխավորված վճարման ենթակա լինել, ֆինանսական և ոչ ֆինանսական հաշվետվություններ և այլնի մասին:
Պարտավորության համառոտ նկարագրություն (140 պ'.ն.)		Ամբուլատոր-պոլիկլինիկական վերլուծական հաշվետվական կայքէջի ստեղծում: Պետական առողջապահական գործակալության տեղեկատվական-վերլուծական կայքէջի ստեղծում:
Համապատասխանությունը		Տեղեկատվության հասանելիություն, հանրային հաշվետվողականություն, հանրային մասնակցություն, թափանցիկություն
Հավակնոտությունը		Պարտավորության իրականացումը կնպաստի առողջապահության ֆինանսավորման մեխանիզմների, պետության կողմից երաշխավորված

	անվճար բուժօգնության ծառայությունների փաթեթի, ինչպես նաև պետության կողմից երաշխավորված անվճար բուժօգնության շրջանակներում փաստացի մատուցված ծառայությունների վերաբերյալ հանրային իրազեկվածության բարձրացմանը, տվյալ բնագավառում պետության կողմից իրականացվող քաղաքականության թափանցիկության և հանրային հաշվետվողականության բարելավմանը, ինչի արդյունքում կուժեղացվի այդ գործընթացներին հանրային մասնակցությունը:

Կատարման կարգավիճակը	Չմեկնարկված	Սահմանափակ կատարված	Բավականին կատարված	Ավարտված
				V

Արդյունքների նկարագիրը	ՀՀ առողջապահության նախարարության կողմից ստեղծվել է պետական առողջապահական գործակալության կայքը (www.sha.am), որը պարունակում է տեղեկատվություն պետության կողմից երաշխավորված անվճար բուժօգնության փաթեթի և առողջապահության ֆինանսավորման մեխանիզմների մասին, ինչպես նաև հաշվետվությունների ստացման երեք մոդուլներ՝ 1. «Բաց կառավարման գործընկերություն Հայաստան»՝ որտեղից հնարավոր է ստանալ թվով 29 հանրային հաշվետվություններ, 2. «Հաշվետվողական համակարգեր» և 3. «ԱՊՀՎԿ (ամբուլատոր պոլիկլինիկական հաշվետվական վերլուծական պորտալ)»: «Հաշվետվողական համակարգ» մոդուլը բաղկացած է 2 բաժիններից՝ «Մասնագետների համար» և «Հանրության համար»: «Մասնագետների համար» բաժինը նախատեսված է ՀՀ առողջապահության նախարարության աշխատակազմի, պետական պատվեր իրականացնող բժշկական կազմակերպությունների և ՀՀ առողջապահության ոլորտի մարզային օղակի պատասխանատուների համար, ովքեր հաշվետվողական համակարգի հնարավորություններից օգտվելու համար ՀՀ առողջապահության նախարարության աշխատակազմի պետական առողջապահական գործակալությունից կարող են ստանալ օգտվողի անհատական անուն և ծածկագիր: Ելնելով օգտվողի լիազորություններից՝ հաշվետվությունները կարող են ամփոփվել հանրապետական, մարզային և բժշկական կազմակերպությունների կտրվածքով: «Հանրության համար» բաժնից կարող է օգտվել յուրաքանչյուր ոք, ում հետաքրքրում են պետական պատվերի շրջանակներում մատուցված բժշկական օգնության և սպասարկման ծառայությունների մասին տեղեկատվությունը: Կարևոր է նշել, որ բոլոր վերոհիշյալ հաշվետվությունները կարող են օգտատիրոջ ընտրությամբ ստացվել տարածքային (քաղաք Երևան, ՀՀ մարզեր), տարիքային (մինչև 18 տարեկան, 18 տարեկանից բարձր) և ժամանակային (2011-2015թթ.) կտրվածքներով: Ստացված հաշվետվությունները կարող են արտածվել MS Excel, MS Word կամ Adobe Acrobat ծրագրային ձևաչափերով: Ամբուլատոր-պոլիկլինիկական հաշվետվական վերլուծական պորտալի (ԱՊՀՎԿ) բաժնում ստեղծված է հնարավորություն նաև հանրային օգտատերերի համար՝ ստանալու տարբեր հաշվետվություններ առողջության առաջնային պահպանման (ԱԱՊ) ոլորտում իրականացվող պետական ծրագրերի վերաբերյալ (ըստ ՀՀ մարզերի, բուժհաստատությունների և որոնման այլ չափանիշների), այդ թվում՝ հաշվետվություններ ԱԱՊ բժշկի մոտ գրանցված բնակչության տարիքա-սեռային կազմի, ԱԱՊ այցերի, հղիների հսկողության և

	այցերի, ԱԱՊ ըստ կատարողականի ֆինանսավորման բոնուսային ցուցանիշների և սքրինինգային հետազոտությունների վերաբերյալ: 2016 թվականի հունիսի 10-ին ՀՀ առողջապահության նախարարությունում կազմակերպվել է հանդիպում առողջապահության ոլորտը ներկայացնող հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների և ՁԼՄ-ների մասնակցությամբ, որի նպատակն էր հանրությանը ներկայացնել պետական առողջապահական գործակալության կայք-էջի հնարավորությունները և պետական պատվերի շրջանակներում իրականացվող բժշկական օգնության և սպասարկման աշխատանքների վերաբերյալ հանրային հաշվետվությունների կազմը:
Վերջնաժամկետը	2015 թ. սեպտեմբեր
Հաջորդ քայլերը	Ստացված առաջարկությունների հիման վրա նախատեսվում է մշակել այդ տեղեկատվությունը հանրության համար առավել մատչելի ներկայացնելու նոր ձևաչափեր:

4. ՀՀ բարձրաստիճան պաշտոնատար անձանց գույքի և եկամուտների հայտարարագրերի թափանցիկության ապահովում		
Պարտավորությունը իրականացնող մարմին		Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողով (համաձայնությամբ)
Պարտավորությունը իրականացնող մարմնի պատասխանատու անձ		Սիրանուշ Սահակյան
Պաշտոն,վարչություն/բաժին		Հանձնաժողովի նախագահ
Էլ. հասցե		info@ethics.am
Հեռախոս		+37410 524689
Այլ շահագրգիռ մասնակից մարմիններ	**Կառավարություն**	ՀՀ արդարադատության նախարարություն, ՀՀ ֆինանսների նախարարություն
	Հասարակական կազմակերպություն նե, մասնավոր հատված, աշխատանքային խմբեր, բազմակողմ այլ կազմակերպություն ներ	«Ինֆորմացիայի ազատության կենտրոն» ՀԿ (համաձայնությամբ), «Թրանսփարենսի ինթերնեշնլ» հակակոռուպցիոն կենտրոն (համաձայնությամբ)
Հիմնական նպատակ		ՀՀ բարձրաստիճան պաշտոնատար անձանց գույքի և եկամուտների հայտարարագրերի թափանցիկության ապահովում
Պարտավորության համառոտ նկարագրություն (140 պ'.ն.)		ՀՀ կառավարության կողմից 2011թ. դեկտեմբերի 15-ի N 1835-Ն որոշմամբ հաստատված բարձրաստիճան պաշտոնատար անձանց գույքի և եկամուտների հայտարարագրերի հրապարակման ենթակա տվյալների ցանկը հնարավորություն չի ընձեռում լիարժեքորեն թափանցիկ դարձնելու բարձրաստիճան պաշտոնատար և նրանց փոխկապակցված անձանց հայտարարագրերում ներառված գույքի բոլոր գործարքների վերաբերյալ տվյալները: Մասնավորապես, դրանք սահմանափակված են գործարքների գնի շեմերով: Հանձնաժողովը նախատեսում է նվազեցնել նման սահմանափակումները և ցանկանում է ընդլայնել հասարակությանը տրամադրվող տվյալների ցանկը և դրանով բարձրացնել հայտարարագրերի մատչելությունը

	հասարակության համար:			
Համապատասխանությունը	Հանրային վստահության բարելավում			
Հավակնոտությունը	Թափանցիկության ընդլայնում			
Կատարման կարգավիճակը	Չմեկնարկված	Սահմանափակ կատարված	Բավականին կատարված	Ավարտված
				V
Արդյունքների նկարագիրը	«Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 15-ի N 1835-Ն և 2011 թվականի դեկտեմբերի 15-ի N 1819-Ն որոշումներում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ կառավարության 2015թ. փետրվարի 19-ի թիվ 150 որոշման ընդունմամբ հրապարակման ենթակա տվյալներից հանվել են գույքի գործարքների համար սահմանված շեմերը: Արդյունքում մամուլում մեծացել են հրապարակված հայտարարագրերին անդրադարձները և հղումները:			
Վերջնաժամկետը	2015թ. հունիս			

5. Պետական գնումների բողոքարկման խորհրդի նիստերի առցանց հեռարձակում					
Պարտավորությունը իրականացնող մարմին		ՀՀ կառավարության աշխատակազմ			
Պարտավորությունը իրականացնող մարմնի պատասխանատու անձ		Հայկ Այունց			
Պաշտոն,վարչություն/բաժին		«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի պետի տեղակալ			
Էլ. հասցե		ayunts@armeps.am			
Հեռախոս		+37410 28-93-24			
Այլ շահագրգիռ մասնակից մարմիններ	**Կառավարություն**				
	Հասարակական կազմակերպություններ,մասնավոր հատված,աշխատանքային խմբեր, բազմակողմ այլ կազմակերպություններ				
Հիմնական նպատակ		Գնումների բողոքարկման խորհրդի որոշումների ընդունման թափանցիկության ապահովում			
Պարտավորության համառոտ նկարագրություն (140 պ'.ն.)		Գնումների բողոքարկման խորհրդի նիստերի առցանց հեռարձակում			
Համապատասխանությունը		Հանրային հաշվետվողականություն, թափանցիկություն			
Հավակնոտությունը		Կբարձրանա գնումների բողոքարկման խորհրդի որոշումների կայացման վերաբերյալ հանրային վստահությունը:			
Կատարման կարգավիճակը		Չմեկնարկված	Սահմանափակ կատարված	Բավականին կատարված	Ավարտված

				V
Արդյունքների նկարագիրը	ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի նիստերի իրական ժամանակի ռեժիմով առցանց հեռարձակումն ապահովելու համար www.gnumner.am կայքում տեղադրվել է համապատասխան հղումը, իսկ 2015թ. հունիս ամսից գնումների բողոքարկման խորհրդի նիստերի առցանց հեռարձակումները հասանելի են www.e-gov.am համացանցային կայքից և իրականացվում են www.youtube.com կայքի միջոցով:			
Վերջնաժամկետը	2015թ. հունիս			
Հավելյալ տեղեկություն				
Սույն հանձնառության շնորհիվ ավելացել է բողոքների քանակը, ասպես օրինակ 2016թ. առաջին կիսամյակի ընթացքում ստացվել է 96 բողոք, 2015թ. նույն ժամանակահատվածի 54 բողոքի համեմատ: Այս փաստը վկայում է գնումների բողոքարկման խորհրդի որոշումների մասին հանրային վստահության բարձրացման վերաբերյալ:				

6. Համայնքային միկրոհարցումների ծրագրի ներդրում 10 համայնքներում		
Պարտավորությունը իրականացնող մարմին		ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարություն
Պարտավորությունը իրականացնող մարմնի պատասխանատու անձ		Աշոտ Գիլոյան
Պաշտոն,վարչություն/բաժին		Աշխատակազմի տեղական ինքնակառավարման վարչության պետ
Էլ. հասցե		a.giloyan@mta.gov.am
Հեռախոս		+37410 511-347
Այլ շահագրգիռ մասնակից մարմիններ	**Կառավարություն**	ՀՀ մարզպետարաններ
	Հասարակական կազմակերպություններ,մասնավոր հատված,աշխատանքային խմբեր, բազմակողմ այլ կազմակերպություններ	ՄԱԿ-ի զարգացման ծրագիր
Հիմնական նպատակ		Համայնքային միկրոհարցումը մատչելի և յուրօրինակ գործիք է, որը կնպաստի համայնքի բնակիչների և ՏԻՄ-երի միջև կապի ամրապնդմանը և որոշումների կայացման գործընթացի թափանցիկության ապահովմանը:
Պարտավորության համառոտ նկարագրություն (140 պ'.ն.)		Թվով 10 համայնքներում ներդրվելու է «Համայնքային միկրոհարցում» ծրագիրը, այդ համայնքներում իրականացվելու են SMS հարցումներ և արդյունքները հրապարակվելու են
Համապատասխանությունը		Հանրային մասնակցություն, թափանցիկություն
Հավակնոտությունը		Պարտավորության իրականացման արդյունքում տեղական ինքնակառավարման մարմինները համայնքային խնդիրների առաջնահերթության առավել հստակ պատկեր կունենան, հարցմանը կներգրավվեն համայնքների բնակիչները և իրենց պատասխաններից կախված կլինի խնդիրների կարգավորման անհրաժեշտությունը և հրատապությունը:

Կատարման կարգավիճակը	Չմեկնարկված	Սահմանափակ կատարված	Բավականին կատարված	Ավարտված
			V	
Արդյունքների նկարագիրը	2016թ. հունիսի 30-ի դրությամբ,կարճ հաղորդագրությունների (SMS) միջոցով միկրոհարցումներ են անցկացվել ՀՀ թվով 9 համայնքներում՝ Արագածոտնի մարզի Աշտարակ, Սյունիքի մարզի Գորիս, Շիրակի մարզի Գյումրի և Արեգնադեմ, Կոտայքի մարզի Եղվարդ, Բյուրեղավան, Քասախ, Ջրվեժ և Արզական: ՄԱԿ-ի Զարգացման Ծրագրի «Կանայք տեղական ժողովրդավարական գործընթացներում» ծրագրի աջակցությամբ, և իրենց իսկ կողմից մշակված մեթոդաբանությամբ, Սյունիքի և Վայոց Ձորի մարզերում իրականացման փուլում են՝ Տաթև խոշորացված համայնքում, ինչպես նաև՝ առաջիկա խոշորացման ծրագրերում ներառված՝ Ջերմուկ, Գնդեվազ, Գորիս, Ակներ, Բարձրավան, Խնձորեսկ, Հարթաշեն, Ներքին Խնձորեսկ, Շուռնուխ, Որոտան, Վերիշեն և Քարահունջ համայնքներում միկրոհարցումների անցկացումը: Ծրագրի այս բաղադրիչը մինչև 10 000 (տասը հազար) ԱՄՆ դոլարի չափով ֆինանսավորվում է Շվեյցարիայի համագործակցության և զարգացման գործակալության կողմից: Միկրոհարցումների արդյունքները հրապարակվել են համայնքների համացանցային կայքերում. http://kotayk.mtad.am/general-information/OpenGovernmentPartnership http://ashtarak.am/Pages/Home/votadmin.aspx http://yeghvard.am/Pages/Misc/Announces/view.aspx?recID=256 http://kasakh.am/Pages/Home/votadmin.aspx http://jrvezh-kotayq.am/Pages/Misc/Announces/view.aspx?recID=316#.V9lMO3V97Dc			
Վերջնաժամկետը	2016թ. դեկտեմբեր			
Հաջորդ քայլերը	Շարունակաբար ընդլայներ հարցում իրականացնող համայնքների քանակը			
Հավելյալ տեղեկություն				
Հանձնառության ամբողջական իրականացմանը խոչընդոտող հիմնական խնդիրը՝ որոշ համայնքներում ֆինանսական միջոցների սղությունն է: «Համայնքային միկրոհարցում» ծրագրի վերաբերյալ. http://europeandcis.undp.org/blog/2015/03/30/my-opinion-matters-how-a-mobile-tool-in-armenia-is-engaging-citizens/				

7. Պետական քաղաքականությունների և օրենսդրական բարեփոխումների՝ բաց, թափանցիկ, մասնակցային և հաշվետու գործընթացի ապահովում	
Պարտավորությունը իրականացնող մարմին	Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն
Պարտավորությունը իրականացնող մարմնի պատասխանատու անձ	Դիանա Ղազարյան

Պաշտոն,վարչություն/բաժին		Հակակոռուպցիոն և քրեակատարողական քաղաքականության մշակման վարչության պետի տեղակալ
Էլ. հասցե		diana_ghazaryan@yahoo.com
Հեռախոս		+37410 594157
Այլ շահագրգիռ մասնակից մարմիններ	**Կառավարություն**	Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն
	Հասարակական կազմակերպություններ,մասնավոր հատված,աշխատանքային խմբեր, բազմակողմ այլ կազմակերպություններ	«Արազա» բարեգործական հասարակական կազմակեպություն
Հիմնական նպատակ		ՀՀ նախարարությունների կոլեգիաների/խորհուրդների օրինակելի աշխատակարգում փոփոխությունների և լրացումների կատարում, որոնք՝ կհստակեցնեն և կտարանջատեն Կոլեգիաների և խորհուրդների գործառույթները, կճշգրտեն դրանցում մասնակից կողմերի կազմը, իրավունքներն ու պարտականությունները, կսահմանեն խորհուրդների ձևավորման և գործունեության՝ բաց, թափանցիկ ընթացակարգերը, ՔՀԿ-ների ներկայացուցչականության և մասնագիտական որոկավորման չափորոշիչները
Պարտավորության համառոտ նկարագրություն (140 պ'.ն.)		Քաղաքականությունների և օրենսդրական բարեփոխումների գործընթացում քաղաքացիական հասարակության արդյունավետ, թափանցիկ և հաշվետու մասնակցային համակարգի ձևավորում:
Համապատասխանությունը		Թափանցիկություն, հաշվետվողականություն, հանրային մասնակցություն
Հավակնոտությունը		Կձևավորվի քաղաքականությունների և օրենսդրական բարեփոխումների գործընթացում քաղաքացիական հասարակության արդյունավետ, բաց, թափանցիկ և հաշվետու մասնակցային համակարգ
Կատարման կարգավիճակը		Չմեկնարկված / Սահմանափակ կատարված / Բավականին կատարված / Ավարտված / / / **V**
Արդյունքների նկարագիրը		2015 թվականի նոյեմբերի 26-ին ՀՀ կառավարության կողմից ընդունվել է «ՀՀ կառավարության 2002 թվականի ապրիլի 18-ի N 16 արձանագրային որոշման մեջ լրացում կատարելու և ՀՀ նախարարին կից հասարակական խորհրդի օրինակելի աշխատակարգին հավանություն տալու մասին» N 52 արձանագրային որոշումը, որի համաձայն յուրաքանչյուր նախարարությանը կից պետք է ստեղծվեն նախարարին կից հասարակական խորհուրդներ: Միաժամանակ, վերոգրյալ որոշմամբ հստակեցվել և տարանջատվել են հասարակական խորհուրդների և կոլեգիաների գործառույթները:
Վերջնաժամկետը		2015թ. օգոստոս
Հաջորդ քայլերը		Որաշմամբ ընդուված կարգի համաձայն 2016թ. հունիսի դրությամբ 18 նախարարություններում ձևավորվել են նախարարին կից հասարակական խորհուրդները: 2016թ. սեպտեմբերին հասարակական

	խորհուրդների հիմնական մասն իրականացրել են իրենց առաջին նիստը, որոնցում արդեն իսկ հավակնոտ միջոցառումներ են պլանավորվել:

8. Պետական կառավարման մարմինների օրինաստեղծ գործունեության մասին հանրության իրազեկում					
Պարտավորությունը իրականացնող մարմին		Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն			
Պարտավորությունը իրականացնող մարմնի պատասխանատու անձ		Դիանա Ղազարյան			
Պաշտոն,վարչություն/բաժին		Հակակոռուպցիոն և քրեակատարողական քաղաքականության մշակման վարչության պետի տեղակալ			
Էլ. հասցե		diana_ghazaryan@yahoo.com			
Հեռախոս		+37410 594157			
Այլ շահագրգիռ մասնակից մարմիններ	**Կառավարություն**	Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն			
	Հասարակական կազմակերպություններ,մասնավոր հատված,աշխատանքային խմբեր, բազմակողմ այլ կազմակերպություններ				
Հիմնական նպատակ		Պետական կառավարման մարմինների կողմից մշակվող նորմատիվ իրավական ակտերի նախագծերի հրապարակման ընդհանուր առցանց հարթակի ստեղծում՝ քաղաքացիական հասարակությանը հնարավորություն ընձեռելով ներկայացնել առաջարկություններ նախագծերի վերաբերյալ, ինչպես նաև տեղեկանալ դրանց կարգավիճակի վերաբերյալ (ընդունվել է, թե ոչ, ինչպես է խմբագրվել, չընդունելու հիմնավորումները):			
Պարտավորության համառոտ նկարագրություն (140 պ'.ն.)		Հանրությունը հնարավորություն կունենա ծանոթանալ ընդունվող նախագծերին մինչև դրանց ընդունումը, ներկայացնել առաջարկություններ պատասխանատու գերատեսչություններին, ինչպես նաև ներդրում ունենալ դրանց լրամշակման գործում			
Համապատասխանությունը		Թափանցիկություն, հանրային մասնակցություն			
Հավակնոտությունը		Հանրության ներգրավում քաղաքականության մշակման գործընթացում: Նախագծվող իրավական ակտերի հասանելիության աստիճանի բարձրացում՝ մեկ միասնական ինտերակտիվ հարթակում հավաքագրելու սկզբունքով:			
Կատարման կարգավիճակը		Չմեկնարկված	Սահմանափակ կատարված	Բավականին կատարված	Ավարտված
				V	
Արդյունքների նկարագիրը		ՀՀ կառավարություն է ներկայացվել «Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի մարտի 25-ի N 296-Ն որոշման մեջ			

	փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը, որով նախատեսվում է ստեղծել նորմատիվ իրավական ակտերի նախագծերի մեկ միասնական հարթակ: Նախագիծը ՀՀ կառավարության 2016 թվականի հուլիսի 8-ի 02/16.8/9965-16 թվակիր հանձնարարականով ուղարկվել է ՀՀ արդարադատության նախարարություն՝ «Էլեկտրոնային կառավարման ենթակառուցվածքների ներդրման գրասենյակ» ՓԲԸ-ի հետ նախագծով նախատեսված միասնական հարթակի տեխնիկական և ծրագրային լուծումները համատեղ քննարկելու նպատակով: Նախագիծը 2016թ. սեպտեմբերի 2-ի ՀՀ կառավարության նիստում հավանության է արժանացել և ներկայացվել ՀՀ վարչապետի ստորագրմանը: Միաժամանակ, ՀՀ արդարադատության նախարարության նախարարության և «Արազա» ԲՀԿ-ի կողմից մշակվել է միասնական հարթակի տեխնիկական նկարագիրը, որի հիման վրա ներկայումս համակարգչային մասնագետների կողմից իրականացվում են կայքի նախագծման աշխատանքները:
Վերջնաժամկետը	2016թ. դեկտեմբեր
Հաջորդ քայլերը	Գերատեսչությունների պատասխանատու մասնագետների ուսուցման գործընթացի ապահովում: Գերատեսչությունների կողմից մշակվող նորմատիվ իրավական ակտերի նախագծերի հրապարակում ստեղծված հարթակում: Գերատեսչությունների կողմից կայքի ներկայացման մասշտաբային իրազեկման կազմակերպում օգտատերերի, մասնավորապես շահագրգիռ ՔՀԿ-ների համար:

9. ՀՀ հանրակրթական պետական ուսումնական հաստատությունների կառավարման խորհուրդների ընտրության և տարեկան բյուջեի պլանավորման ու ծախսերի թափանցիկության ապահովում		
Պարտավորությունը իրականացնող մարմին		ՀՀ կրթության և գիտության նախարարություն
Պարտավորությունը իրականացնող մարմնի պատասխանատու անձ		Սյուզաննա Սոսի Մակյան
Պաշտոն,վարչություն/բաժին		Հանրակրթության վարչության նախադպրոցական և միջնակարգ կրթության քաղաքականության մշակման և վերլուծության բաժնի պետ
Էլ. հասցե		syuzannamakyan@mail.ru
Հեռախոս		+37410 524777
Այլ շահագրգիռ մասնակից մարմիններ	**Կառավարություն**	ՀՀ կրթության և գիտության նախարարություն
	Հասարակական կազմակերպություններ,մասնավոր հատված,աշխատանքային խմբեր, բազմակողմ այլ կազմակերպություններ	«Վորլդ Վիժն Հայաստան» բարեգործական կազմակերպության, «Գորիսի ուսուցիչների միություն» ՀԿ

Հիմնական նպատակ	Հանրային վստահության բարելավում: Հանրային միջոցների ավելի արդյունավետ կառավարում: Գործուն ժողովրդավարության ապահովում, հանրային կառավարման գործընթացներում ակտիվ քաղաքացիական մասնակցություն, թափանցիկության և հաշվետվողականության ապահովում:
Պարտավորության համառոտ նկարագրություն (140 պ'.ն.)	ՀՀ կրթության և գիտության նախարարի՝ 2010 թվականի մարտի 18-ի N 113-Ն հրամանով հաստատված՝ «Հայաստանի Հանրապետության «Պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպության կոլեգիալ կառավարման մարմնի՝ խորհրդի ձևավորման կարգի» լրամշակում: «Հանրակրթական ուսումնական հաստատությունների տարեկան բյուջեի պլանավորման և բյուջեի տարեկան ծախսերի հաշվետվության կարգի» մշակում և հաստատում:
Համապատասխանությունը	Տեղեկատվության հասանելիությանը, հանրային հաշվետվողականություն, քաղաքացիական հասարակության ներգրավածություն, թափանցիկություն:
Հավակնոտությունը	ՀՀ հանրակրթական պետական ուսումնական հաստատության կառավարման խորհրդի ընտրության կարգում փոփոխությունների կատարումը, հանրակրթության ոլորտում մատուցվող կրթական ծառայությունների բյուջեի պլանավորման (տարեկան բյուջեի նախագծի) և տարեկան ֆինանսական ծախսերի թափանցիկության և հաշվետվողականության ապահովումը կնպաստի կառավարումն ավելի բաց և թափանցիկ դարձնելուն, կնավզեցվեն կոռուպցիոն ռիսկերը, կապահովվի հանրային ակտիվ մասնակցությունը, կձևավորի վստահության մթնոլորտ:
Կատարման կարգավիճակը	Չմեկնարկված: Սահմանափակ կատարված: Բավականին կատարված: Ավարտված: V
Արդյունքների նկարագիրը	Աշխատանքային խմբի կողմից լրամշակվել և ՀՀ կրթության և գիտության նախարարի 2015 թվականի փետրվարի 24-ի N 102-Ն հրամանով հաստատվել է «Հայաստանի Հանրապետու-թյան կրթության և գիտության նախարարի 2010 թվականի մարտի 18-ի N 113-Ն հրամանում լրացում և փոփոխություններ կատարելու մասին»՝ «Հայաստանի Հանրապետության «Պետական ուսումնական հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպության կոլեգիալ կառավարման մարմնի՝ խորհրդի ձևավորման կարգը»: Աշխատանքային խմբի կողմից մշակվել և հաստատման է ներկայացվել նաև «Հանրակրթական ուսումնական հաստատությունների տարեկան բյուջեի պլանավորման և բյուջեի տարեկան ծախսերի հաշվետվության կարգը», որը հաստատվել է 2015 թվականի մարտի 30-ի N 205 Ա/Ք հրամանով: Հանրակրթական դպրոցների կայքէջերում և հաստատության հայտարարությունների անկյունում վերոնշյալ կարգերի տեղադրումը կնպաստի ստանձնած հանձնառությունները առավել արդյունավետ իրականացնելու համար: Կարգերը տեղադրված են ՀՀ կրթության և գիտության նախարարության www.edu.am կայքում, «Հանրակրթական ուսումնական հաստատությունների տարեկան բյուջեի պլանավորման և

	բյուջեի տարեկան ծախսերի հաշվետության կարգը»՝ նաև Հայաստանի իրավական տեղեկատվական համակարգ՝ www.arlis.am կայքում: Համապատասխան գրություններ են ուղարկվել ՀՀ ԿԳՆ ենթակայության ուսումնական հաստատություններ, Երևանի քաղաքապետարան և ՀՀ մարզպետարաններ՝ ուսումնական հաստատություններում այս կարգերը կիրարկելու համար:
Վերջնաժամկետը	2015թ. մարտ
Հաջորդ քայլերը	Ստացված առաջարկությունների և դիտողությունների հիման վրա կարգը կլրամշակվի:
Հավելյալ տեղեկություն	
«Հայաստանի Հանրապետության «Պետական ուսումնական հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպության կոլեգիալ կառավարման մարմնի՝ խորհրդի ձևավորման կարգն» արդեն կիրարկվում է հանրակրթական դպրոցներում, ինչ վերաբերում է «Հանրակրթական ուսումնական հաստատությունների տարեկան բյուջեի պլանավորման և բյուջեի տարեկան ծախսերի հաշվետության կարգին», ապա 2015-2016 ուսումնական տարվանից սկսված դպրոցները կառաջնորդվեն դրանով, ապա, անհրաժեշտության դեպքում, տեղերից ստացված առաջարկությունների և դիտողությունների հիման վրա կարգը կլրամշակվի:	

10. Հանրային ծառայողների գիտելիքների և հմտությունների բարելավում տեղեկատվության ազատության և հակակոռուպցիոն ոլորտներում		
Պարտավորությունը իրականացնող մարմին		ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարություն
Պարտավորությունը իրականացնող մարմնի պատասխանատու անձ		Աշոտ Գիլոյան
Պաշտոն,վարչություն/բաժին		Աշխատակազմի տեղական ինքնակառավարման վարչության պետ
Էլ. հասցե		a.giloyan@mta.gov.am
Հեռախոս		+37410 511-347
Այլ շահագրգիռ մասնակից մարմիններ	**Կառավարություն**	ՀՀ քաղաքացիական ծառայության խորհուրդ
	Հասարակական կազմակերպություններ,մասնավոր հատված,աշխատանքային խմբեր, բազմակողմ այլ կազմակերպություններ	«Ինֆորմացիայի ազատության կենտրոն» ՀԿ «Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիա» ՀԿ
Հիմնական նպատակ		Հանրային ծառայողների գիտելիքների և հմտությունների ամրապնդման, կոռուպցիայի դեմ պայքարի հմտությունների, ինչպես նաև տեղեկատվության ազատության զարգացմանն ուղղված դասընթացների միջոցով խթանել հանրային ծառայությունների որակի բարելավումը:
Պարտավորության համառոտ նկարագրություն (140 պ'.ն.)		Պետական ծառայողների համար կոռուպցիայի դեմ պայքարի և տեղեկատվության ազատության ոլորտում կազմակերպվող վերապատրաստման դասընթացների միջոցով տեղեկատվության, գիտելիքների և հմտությունների ապահովում: Միաժամանակ իրականացվում է նաև համայնքային ծառայողների, տեղական ինքնակառավարման մարմինների, ինչպես նաև ՀՀ մարզպետարանների աշխատակիցների վերապատրաստումները:

	Նշված ծրագրերում ներառված են կոռուպցիայի դեմ պայքարի հմտությունների բարելավմանը և տեղեկատվության ազատությանը վերաբերող թեմաներ:			
Համապատասխանությունը	Տեղեկատվության հասանելիությանը, հանրային հաշվետվողականություն, թափանցիկություն:			
Հավակնոտությունը	Պարտավորության իրականացման արդյունքում հանրային ծառայողները հնարավորություն կունենան ապահովել առավել բարձր մակարդակի թափանցիկություն և հաշվետվողականություն՝ հանրային ծառայություններ մատուցելիս:			
Կատարման կարգավիճակը	Չմեկնարկված	Սահմանափակ կատարված	Բավականին կատարված	Ավարտված
				V
Արդյունքների նկարագիրը	«Բաց կառավարման գործընկերություն» նախաձեռնության շրջանակներում Հայաստանի Հանրապետության երկրորդ գործողությունների ծրագրով ամրագրված «Հանրային ծառայողների գիտելիքների և հմտությունների բարելավում տեղեկատվության ազատության և հակակոռուպցիոն ոլորտներում» պարտավորության մասով 2015 թվականի ընթացքում վերապատրաստվել է 255 քաղաքացիական ծառայող, որից 14-ը՝ «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» ՀԿ-ի, 42-ը՝ «Հայ պետական ծառայողների միություն» ՀԿ-ի, 121-ը՝ «ՀՀ աշխատանքի և սոցիալական հետազոտությունների ազգային ինստիտուտի», 78-ը՝ «ՀՀ արդարադատության նախարարության իրավաբանական ինստիտուտի» կողմից: ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարի 2015թ. մայիսի 19-ին հաստատած «ՀՀ մարզերի համայնքների ղեկավարների և ավագանիների անդամների վերապատրաստման» ծրագրում «Կոռուպցիայի դեմ պայքարի հմտությունները տեղական ինքնակառավարման համակարգում» թեմային հատկացվել է 2 ժամ: «Տեղեկատվության ազատության սահմանափակումները, դրանց տրամադրումը, մերժելու հիմքերը և կարգը» թեմային նույնպես հատկացվել է 2 ժամ: ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարի 2015թ. մայիսի 19-ին հաստատած «Տարածքային կառավարման մարմինների աշխատակիցների մասնագիտական գիտելիքների և աշխատանքային ունակությունների կատարելագործման (վերապատրաստման) ընդհանուր ժամաքանակի շրջանակներում» «Տեղական ինքնակառավարման մարմինների անունից ծառայությունների մատուցման ժամանակ ծագող կոռուպցիոն ռիսկերը» թեմային հատկացվել է 8 ժամ: «Տեղեկատվության հասկացություն», «Տեղեկատվության ազատության իրավական հենք» և տեղեկատվության ազատությանը վերաբերող այլ թեմաների քննարկմանը նույնպես հատկացվել է 8 ժամ: 2014-2015 թվականներին նշված ծրագրերով վերապատրաստվել են 2103 համայնքային ծառայող, 1518 համայնքների ղեկավարներ և ավագանիների անդամներ, ինչպես նաև մարզպետարանների 150 աշխատակիցներ:			
Վերջնաժամկետը	2015թ. դեկտեմբեր			
Հաջորդ քայլերը	Շարունակել հանրային ծառայության ոլորտում վերապատրաստման դասընթացների անցկացումը:			
Հավելյալ տեղեկություն				
Վերապատրաստման արդյունքների վերաբերյալ տեղեկատվությունը պարբերաբար տեղադրվում է ՀՀ				

տարածքային կառավարման և զարգացման նախարարության համապատասխան կայք էջում:

11. Խոշոր համայնքների տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության թափանցիկության ապահովում		
Պարտավորությունը իրականացնող մարմին		ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարություն
Պարտավորությունը իրականացնող մարմնի պատասխանատու անձ		Աշոտ Գիլոյան
Պաշտոն,վարչություն/բաժին		Աշխատակազմի տեղական ինքնակառավարման վարչության պետ
Էլ. հասցե		a.giloyan@mta.gov.am
Հեռախոս		+37410 511-347
Այլ շահագրգիռ մասնակից մարմիններ	**Կառավարություն**	ՀՀ մարզպետարաններ
	Հասարակական կազմակերպություններ,մասնավոր հատված,աշխատանքային խմբեր, բազմակողմ այլ կազմակերպություններ	Ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբ ՀԿ
Հիմնական նպատակ		Կապահովվի Հայաստանի 20,000 և ավելի բնակչություն ունեցող համայնքների համացանցային կայքերի ստեղծումը, թարմացումը, համայնքային իշխանության կողմից ընդունված բոլոր իրավական ակտերի հրապարակումը, ավագանու նիստերի, հանրային քննարկումների և լսումների վերաբերյալ ծանուցումը և ավագանու նիստերի առցանց հեռարձակումը:
Պարտավորության համառոտ նկարագրություն (140 պ'.ն.)		20,000 և ավելի բնակչություն ունեցող համայնքների ավագանու նիստերը, հանրային քննարկումներն ու ՏԻՄ ասուլիսները առցանց հեռարձակելու տեխնիկասարքավորումների գնման, եղած կայքերի վերազինման կամ ստեղծման համար անհրաժեշտ է հայթայթել միջոցներ, ապահովել վերջիններիս և կայքերի պատրաստման ծառայությունների գնման գործընթացը: 20,000 և ավելի բնակչություն ունեցող համայնքների համացանցային տեղեկատվական կայքերի ստեղծում՝ հանրային մեկնաբանությունների հնարավորությամբ: Համայնքների համապատասխան աշխատակիցների համար պետք է կազմակերպվեն դասընթացներ: Կայքերը պետք է գործարկվեն, թիրախ համայնքների ավագանու նիստերը և ՏԻՄ ասուլիսները պետք է առցանց հեռարձակվեն:
Համապատասխանությունը		Տեղեկատվության հասանելիությանը, հանրային հաշվետվողականություն, թափանցիկություն:
Հավակնոտությունը		Պարտավորության իրականացման արդյունքում համայնքի բնակչությունը տեղեկացված կլինի համայնքային ծրագրերի ավագանու նիստերում քննարկվող հարցերի ավագանու՝ այս կամ այն հարցի շուրջ դիրքորոշման արտահայտման վերաբերյալ:

Կատարման կարգավիճակը	Չմեկնարկված	Սահմանափակ կատարված	Բավականին կատարված	Ավարտված
			V	
Արդյունքների նկարագիրը	2016թ. հունիսի 30-ի դրությամբ 20 000 և ավելի բնակչություն ունեցող 17 համայնքներ արդեն ստացել են ավագանու նիստերի, հանրային քննարկումների և ՏԻՄ ասուլիսների առցանց հեռարձակման ապահովմանն անհրաժեշտ սարքավորումների մի մասը (միացման համար անհրաժեշտ օժանդակ սարքեր, հիշողության քարտեր): Սարքավորումների մնացած մասը, համաձայն մատակարարների հետ արդեն իսկ կնքված պայմանագրերի, ծրագրում ընդգրված համայնքներին կտրամադրվեն հուլիս ամսվա ընթացում: Օգոստոս ամսին համայնքներում կիրականացվեն համակարգերի տեղադրման աշխատանքները, այնուհետ՝ տեխնիկական մասնագետների վերապատրաստումը: Հաշվի առնելով վերը թվարկված համայնքներում պահանջվող արագությամբ համացանցային կապի առկայությունը՝ կարծում ենք, որ արդեն սեպտեմբեր ամսից համայնքները հնարավորություն կունենան առցանց հեռարձակումներ իրականացնել: Ներկա դրությամբ՝ 20 000 և ավելի բնակչություն ունեցող Գյումրի, Վանաձոր, Հրազդան և Արմավիր համայնքները (սեփական բյուջեների հաշվին) արդեն իսկ ապահովել է ավագանու նիստերի և ՏԻՄ ասուլիսների առցանց հեռարձակման հնարավորությունը:			
Վերջնաժամկետը	2016թ. ապրիլ			
Հաջորդ քայլերը	Համայնքների ավագանու նիստերի և ՏԻՄ ասուլիսների առցանց հեռարձակում			
Հավելյալ տեղեկություն				
Եվրոպային խորհրդի «Աջակցություն Հայաստանում տեղական ժողովրդավարության ամրապնդմանը» ծրագրի շրջանակներում սարքավորումներն արդեն գնվել են, և դրանց որոշ մասը տրամադրվել է համայնքներին և իրականացվում են դրանց տեղադրման աշխատանքները: Համայնքային կայքերի կանոնավոր շահագործման անհրաժեշտությունից ելնելով՝ 17 համայնքապետարանների աշխատակիցները պարբերաբար վերապատրաստվել են: Պարտավարությունն իրականացվելու է ժամանակակից տեխնիկական սարքավորումների միջոցով: Կայքերի գործարկումը և նիստերի և ասուլիսների հեռարձակումը կհանգեցնեն առավել մեծ քանակով շահառուների՝ համայնքային առօրյայից իրազեկված լինելուն:				

Եզրակացություն

Աշխարհում ընթացող բաց կառավարություն շարժումը կոչված է ամրապնդելու քաղաքացիների և իրեն կառավարող էլիտաների միջև վստահությունը: Դա իշխանության համաչափ արձագանքն է քաղաքացիական հասարակության արդարացի պահանջին:

Հայաստանի Հանրապետությունը 2011-2016թթ. ընթացքում ԲԿԳ իր երկու ազգային ծրագրերի միջոցով շոշափելի բարեփոխումներ է իրականացրել այնպիսի կարևորագույն ոլորտներում, ինչպիսիք են բյուջետային համակարգը (օրինակ՝ Ծրագրային

բյուջետավորումը), հանքարդյունաբերությունը (օրինակ՝ Արդյունահանող ճյուղերի թափանցիկության նախաձեռնությանը միանալու գործընթացը), առողջապահությունը, կրթությունը, տեղական ինքնակառավարումը, տեղեկատվության ազատությունը, պետական գնումների բարեփոխումները, իրավաստեղծ գործունեությունը, տեղեկատվության մատչելիությունը և այլն:

Շարունակականություն

Հայաստանի կողմից արդեն իսկ որդեգրած մոտեցում է դարձել ԲԿԳ սկզբունքներին համահունչ գործելաոճը նաև ԲԿԳ գործողությունների ծրագրից դուրս: Դրա վառ օրինակն է նախորդ Գործողությունների ծրագրերով ստանձնած պարտավորությունների շարունակականությունը: Նախորդ Գործողությունների ծրագրերով ստանձնած հանձնառությունները շարունակականորեն իրականացվում են անկախ դրանց՝ հաջորդ ԲԿԳ ծրագրերում ընդգրկված չլինելու հանգամանքից: Այսպես օրինակ՝ արդեն իսկ ներդրվել է *«Mail-Armenia»* համակարգը, որը գործում է *e-Citizen* պորտալի ներքո և ՀՀ քաղաքացիներին ամրակցվում են անձնական էլեկտրոնային հասցեներ: Աշխատանքներ են տարվում, որպեսզի հնարավոր լինի պաշտոնական ծանուցումներն ուղարկել նաև այդ համակարգի միջոցով: «*Համայնքների տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության թափանցիկության ապահովում*» հանձնառությունը իրականացվելու է Հայաստանի 20000-ից պակաս բնակչություն ունեցող համայնքների համար: Կշարունակվի նաև *համայնքապետարանների գործունեության, տեղական ինքնակառավարման մարմիններին (այսուհետ՝ ՏԻՄ) (համայնքների ղեկավարներին և ավագանիների անդամներին) վերապահված լիազորությունների իրականացման արդյունավետության բարձրացումը*՝ քաղաքացիների սպասարկման նոր գրասենյակների բացման, ինչպես նաև համայնքների ղեկավարների և ավագանիների անդամների վերապատրաստման միջոցով: Հայաստանն ավարտին կհասցնի արդեն իսկ մեկնարկած *Արդյունահանող ճյուղերի թափանցիկության նախաձեռնությանը* միանալու գործընթացը:

Զեռքբերումներ

Ոգեշնչող է, որ մեր երկրի ջանքերը նկատվում և գնահատվում են թե՛ հայաստանյան քաղաքացիական հասարակության կողմից, և թե՛ միջազգային հանրության կողմից: Մասնավորապես, 2015 թվականի սեպտեմբերին «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպության կողմից նախաձեռնած 13-րդ «Ոսկե բանալի և ժանգոտ կողպեք» ամենամյա մրցանակաբաշխությանը «Բաց կառավարման գործընկերություն» միջազգային նախաձեռնության շրջանակում հայաստանյան գործողությունների ծրագրի հանձնառությունների լավագույն իրականացման համար ՀՀ կառավարության աշխատակազմն արժանացել է «Ոսկե բանալի» մրցանակին: 2015 թվականի հոկտեմբերին Մեքսիկայի Միացյալ Նահանգների Մեխիկո քաղաքում ԲԿԳ նախաձեռնության գլոբալ համաժողովի շրջանակներում ամփոփվել են նախաձեռնության ամենամյա միջազգային մրցանակաբաշխության արդյունքները, որին առաջին անգամ մասնակցելու հայտ ներկայացրած Հայաստանն արժանացել է բարձր մրցանակի՝ զբաղեցնելով տարածաշրջանում (Ասիա-Խաղաղօվկիանոսյան) առաջին տեղը, և ստանալով այսպես

կոչված՝ «Տարածաշրջանային չեմպիոն» կոչումը: Մրցանակաբաշխությանը Հայաստանը ներկայացրել է «Համայնքային կառավարման տեղեկատվական համակարգի ստեղծում և ներդրում ՀՀ համայնքապետարաններում» նախաձեռնությունը: Մրցույթում այն ներկայացվել է «Խելացի համայնք» (Smart Municipality) անվանմամբ: Ծրագրի նպատակն է Հայաստանի ՏԻՄ-երի գործունեության արդյունավետության բարձրացումը և բաց կառավարման միջոցով համայնքների բնակիչներին ՏԻՄ-երի կողմից մատուցվող հանրային ծառայությունների բարելավումը:

Երրորդ ԳԾ-ի մշակման գործընթաց

Նախորդ երկու Գործողությունների ծրագրերի մշակման և իրականացման արդյունքում կուտակված աննախադեպ փորձը, ԲԿԳ միջազգային ցանցը և անկախ հաշվետվական մեխանիզմի (այսուհետ՝ ԱՀՄ) առաջարկությունները հանդիսացան այն անկյունաքարը, որի հիման վրա ՀՀ կառավարությունը՝ քաղաքացիական հասարակության, միջազգային գործընկեր կազմակերպությունների և այս անգամ նաև անհատ քաղաքացիների ու մասնավոր հատվածի ներկայացուցիչների հետ համատեղ, նախաձեռնեց երրորդ Գործողությունների ծրագրի մշակման գործընթացը: Այժմ, առաջնորդվելով այն համոզմունքով, որ բազմակողմ համագործակցության և շահագրգիռ քննարկումների արդյունքում մշակված ծրագիրը հանգեցնում է որակապես բարձր և առավել շոշափելի արդյունքների, ԲԿԳ-Հայաստան երրորդ Գործողությունների ծրագիրը մշակվեց հենց այդ տրամաբանությամբ: Այսինքն, առաջնահերթ կարևորություն էր տրված ծրագրի՝ ԲԿԳ հիմնարար սկզբունքներին համապատասխան մշակման փուլ անցկացնելու խնդրին, որն իր շղթայական ազդեցությունը պետք է ունենա հաջորդող 2 տարիների իրականացման ողջ գործընթացի վրա:

Ընդհանուր առմամբ ներկայացվել էր **շուրջ 70 առաջարկություն, որոնցից ընտրվեցին 8-ը,** որոնք համապատասխանում էին ԲԿԳ սկզբունքներին և ձևաչափին: Ծրագրում ներառված յուրաքանչյուր պարտավորություն թիրախային է և ընտրված է համակողմանի քննարկումների արդյունքում:

ՀՀ կառավարությունը, իր ԲԿԳ երրորդ գործողությունների ծրագիրը մշակելիս, առաջնորդվել է ԲԿԳ մարտահրավերների հաղթահարմանն ուղղված համապատասխան պարտավորությունների ներգրավման սկզբունքով, ԲԿԳ սկզբունքներով և www.opengovpartnership.org կայքում առկա գործողությունների ծրագրի մշակման ձևաչափով, ինչպես նաև Միացյալ ազգերի կազմակերպության կողմից հաստատված կայուն զարգացման նպատակներով ու ազգային հակակոռուպցիոն ռազմավարությամբ:

ՀՀ կառավարությունը բարձր է գնահատում ԲԿԳ երրորդ գործողությունների ծրագիրը մշակելու գործընթացում ներգրավված բոլոր կողմերի, մասնավորապես՝ պետական գերատեսչությունների, քաղաքացիական հասարակության, միջազգային կազմակերպությունների, մասնավոր հատվածի ներկայացուցիչների, փորձագետների և անհատ քաղաքացիների ջանքերը:

Միջազգային համագործակցություն

Հայաստանն անմասն չի մնում նաև ԲԿԳ միջազգային գործընթացներից: Այսպես, օրինակ, ԲԿԳ հայաստանյան թիմի անդամ Արամ Ասատրյանը Կոլբա նորարարական լաբորատորիայի ղեկավար Մարինա Մխիթարյանի հետ համատեղ հեղինակեցին և www.opengovpartnership.org կայքում 2016 թվականի օգոստոսի 3-ին հրապարակեցին *«Մուրացիկներ և ցանցաբակներ. քաղաքականության մշակման պատվիրակումը քաղաքացուն Հայաստանում»* վերնագրով բլոգը՝ նվիրված հայաստանյան 3-րդ գործողությունների ծրագրի մշակման համար կիրառված նոր գործիքների (crowdsoursing) կիրառմանը:

Հայաստանը վերահաստատեց իր ԲԿԳ նախաձեռնության լիիրավ անդամ լինելու պատրաստակամությունը՝ 2015 և 2016 թվականների համար 50000 ԱՄՆ դոլար անդամավճար վճարելով ԲԿԳ նախաձեռնության Օժանդակող գրասենյակի և ԱՀՄ-ի պահպանման ծախսերը հոգալու համար:

Բաց կառավարումն ինքնին չի նշանակում կառավարման արդյունավետության բարձրացում, սակայն դրա միջոցով հնարավոր է ներդնել վերահսկողական նոր գործիքակազմ, բարձրացնել հաշվետվողականությունը, թափանցիկ դարձնել պետական գերատեսչությունների աշխատանքը, դրանով իսկ հզորացնել ժողովրդի իշխանությունը, ինչն էլ իր հերթին կհանգեցնի արդյունավետ կառավարմանը: Այս ամենից ելնելով՝ Հայաստանը շարունակում է ԲԿԳ սկզբունքները առավել մեծ պարտավորվածությամբ կյանքի կոչելու ուղին, ինչը պատվաբեր է 21-րդ դարի յուրաքանչյուր ժողովրդավար պետության համար: Կարևոր է նաև, որ ամրապնդվում է քաղաքացի-պետություն փոխգործակցության նոր մշակույթը՝ ապահովելով քաղաքացու ակտիվ մասնակցությունն որոշումների կայացման և քաղաքականության մշակման գործընթացներում: